

ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Տէր, պահէ՛ Տունը հրաւակեօր, ոյր կառոյցքին կազմն ու ծիր
 Փողփողեմէջ յոյսիդ շողովը Դուն ինքնին գծեցիր,
 Ու կամեցար որ փոքրիկ Հօսրդ զայն ընէ ապաստան
 Խաբխած կեանքին իր եւ հոգւոյն՝ իբրեւ Տապան փրկութեան:
 Փութա՛, հասի՛ր, այցելութեան ժամ է արդ, Տէր ապաւեն,
 Տե՛ս վիճսն ու մահն, աղէտն ու չարն ի՞նչպէս իր դէմ կը դաւեն:

Փրթած՝ ժայռէն ան իր հիմքին, զերթ հողմակոծ նաւ մը մութ՝
 Մերթ լոյծ լեռանց բարձրերը, մերթ դէպի անդունդ խորամուտ,
 Ցասկոտ ու խօլ կոհակներուն մէջ կը ծեծուի տարուբեր,
 Մինչ հզօրները ափունքէն զայն կը դիտեն անտարբեր:
 Կարկառէ՛ աչքդ, Տէր, փրկէ՛ զայն խութերէ, հէներէ,
 Թո՛ղ խաչանիւ խառիսխիդ տեսը իր մէջ Յոյսըդ հրահրէ:

Հրա՛ւ. չէ խլուած դեռ անոր կայմը իր կայէն ամրակոտ,
 Ձէ պատռած առագաստին դեռ քոչարանը մափուր,
 Ձեն յօռտուած կապարանները հաստապինդ գիտերուն,
 Ձի դեռ ղեկին ղամբարն — Հաւասփր — կը հեւայ մէջն անհուն:
 Բայց կը գոռայ մորիկն իր շուրջ, մռայլն է պատեր իր չորս դին.
 Խաղաղութեան Տէր, շունչդ լոկ կրնայ սաստել անդունդին:

Խարակներ թուխ, զերթ գազաններ յուճկապարիկ, փրփրազայր
 Յորձանքներէն յանկարծ ցցած դուրս գլուխներնին բազմասայր,
 Կը մղձկոտեն սիրտերն անոնց որ հոն մթնած երկնից տակ
 Կը գալարուին զահանդանքովը վիհներուն անյատակ:
 Տէր սիրոյ, ոյր արտին ծնունդն է ամէն ինչ որ է բարի,
 Պիտի ներե՛ս որ ողջ ազգի մ'նոգին այսպէս խաւարի:

Հրամայէ՛, եւ պիտի ալեաց կիրքերն աղի խաղաղին,
 Ու նաւն յոյսիդ առաստանով պիտի գտնէ իր ուղին.
 Պատնէ՛ քիպոտ ամպերուն դէզն որ կը ծածկէ հորիզոնն,
 Որ ան տեսնէ նոր զարունի մը փառներուն ծաղկիլն հոն:
 Տէր զթութեան, սիրտերն ամէն, թեւերն ամէն դէպի Քեզ
 Են սեւեռուած, քաղցր ակնարկիդ ըսպասումովն ըղձակէզ:

Ազգ Հայոց, ազգ իմ սիրական, պահէ՛ Հաւասփր, Յոյսդ ու Սէրն,
 Աստուածային Հոգւոյն բղխումնն երբեակ այդ սուրբ սերս եւ սեռն.
 Պիտի կանգնի իր հիմունքէն սասանած Տունը նորէն,
 Պիտի բերկրին անոր ի տես դարձեալ սիրտերն համօրէն,
 Փերած չէ գահը. չէ կոտրած մականը սուրբ. ողջ եւ դեռ.
 Սրբէ՛ արցունքդ, հայէ՛ երկինք. ամպն է արդէն փարատեր:

13 Ապրիլ 1938

Թ. Ե. Գ.